

Ն.Ս.Օ.Տ.Տ. ԳԱՐԵԳԻՆ Բ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ՀՈՎՎԱԴՊԵՏԱԿԱՆ ԱՆԴՐԱՆԻԿ ԱՅՅԸ ՇԻՐԱԿԻ ԹԵՄ

Հուլիսի 24-30-ը Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն հայոց հայրապետը հայաստանում կատարեց անդրանիկ հովվապետական իր այցը: Վեհափառ հայրապետի հովվապետական օրհնաբեր այցին առաջինն արժանացավ Շիրակի թեմը, ինչը պատահական չէր՝ իբրև աղետի գոյի, որ շարունակում է կրել աղետյալի կնիքը արդեն պատաներկու տարի:

«Այս շրջանին, երբ մեր ժողովրդի զավակունք փոքր-ինչ հուսահատ փնճակում են, անհրաժեշտ է, որ Եկեղեցին, մենք՝ եկեղեցականներս, գտնվենք ժողովրդի կողքին՝ նրան գտնելու, խանդավառելու, հույսով ու հավատով լցնելու դեպի մեր հայրենիքի վաղվա օրը: Այս ճամփորդությունը սկսում են այն վստահությամբ, որ այսօրի կարողանամ բարձրացնել ողին արիության բարեպաշտ մեր ժողովրդի: Մեկնում են հանդիպելու մեր ժողովրդի զավակաց, զրուցելու նրանց հետ, բաժնեկից լինելու նրանց առօրյա հոգսերին, հաղորդակցվելու նրանց երազներին ու իղձերին՝ Մայր Աթոռ Ս. Էջմիածնից տանելով Քրիստոսաւէ Մեր սրբավայրի օրհնությունը, Մայր և հույսը», - մեկնումից առաջ Ս. Էջմիածնի Մայր Տաճարում ասաց Վեհափառ հայրապետը:

Յոթօրյա այցելության ընթացքում Վեհափառ հայրապետը եղավ Շիրակի երեք քաղաքներում և 12 գյուղերում, ամենուր հայրապետական իր օրհնությունն ու պատգամը բաշխեց և իր գորակցությունը հայտնեց շիրակցի հավաքացյալներին՝ բազմաթիվ հանդիպումներ ունենալով նրանց հետ, այցելելով հիվանդանոցներ, լինելով կարիքավորների հարկերից ներս և ի մոտո ծանոթանալով շիրակցիների դժվարություններին ու հոգսերին: Եվ չնայած սոցիալական բազմաթիվ խնդիրների, Վեհափառ հայրապետը տեսավ շիրակցու դարերով հաստատված հավաքը:

Ողջ այցելության ընթացքում Վեհափառ հայրապետին ուղեկցում էին Արարարյան հայրապետական թեմի առաջնորդական փոխանորդ Տ. Նավասարդ եպս. Կճոյանը, Գուգարաց թեմի առաջնորդ Տ. Մեայոն եպս. Զուլյանը, Շիրակի թեմի առաջնորդական տեղապահ Տ. Միքայել ծ. վրդ. Աջապահյանը, որոնք, միանալով Վեհափառ հայրապետի ոգեշունչ քարոզներին, հավաքքի ու միասնության էին կոչում հավաքավոր շիրակցուն: Որպես զավագանակիր, ջբախմբի մաս էր կազմում նաև Տ. Մարկոս արեղա Հովհաննիսյանը, հոգևորականներ Շիրակի թեմից:

«ՏԵՍԱ ԳՅՈՒՄՐԵՑՈՒ ԶԵՐՄ ՀԱՎԱՏՔԸ, ՈՐ ԲԱՅՏԱՌԻԿ Է»

Հուլիսի 24-ին Շիրակի մարզի սահմանագծին Վեհափառ Հայրապետին դիմավորելու էին եկել Շիրակի մարզպետ Ֆելիքս Փիրումյանը, Գյումրիի քաղաքապետ Վարդան Լուկասյանը, Շիրակի թեմի առաջնորդական տեղապահ Տ. Միքայել ծ. վրդ. Աջապահյանը, թեմի հոգևորական դասը, մարզային և քաղաքային իշխանությունների ներկայացուցիչներ:

Նորին Սրբության անդղանիկ հովվապետական այցը Շիրակի թեմ խորը երախտագիտությամբ ընդունեց Շիրակի հոգևոր առաջնորդը՝ իր ողջույնի խոսքում նշելով, որ այն Վեհափառ Հայրապետի գնահատականն է՝ Կրկնված կրոնապաշտ գյումրեցու անուրանալի հավատքին:

Վեհափառ Հայրապետի առաջին հանգրվանը պատմական Գյումրին էր: Առաջնորդանիստ Յոթվերջ Ս. Աստվածածին եկեղեցում և շրջափակում հավատացյալների հոծ բազմություն էր, որ մեծազույն խանդավառությամբ եկել էր դիմավորելու Հայոց Հայրապետին, ստանալու նրա օրհնությունը: «Հրաշափառ»-ով և շարականների երգեցողությամբ Վեհափառ Հայրապետը մուտք գործեց եկեղեցի: Նորին Սրբությունն իր ողջույնը հղելով բոլոր ներկաներին և իր ուրախությունն արտահայտելով հավատքի այդչափ ջերմ ողբերգման համար, մասնավորապես սուսաց.

«Փառք և գոհություն եմ առ Աստված բարձրացնում այս պահին, որ Տերը պարգևեց ինձ հուզումի այս բացառիկ, գեղեցիկ առիթը: Շիրակի մարզի սահմանից սկսելով ես տեսա, զգացի և ապրեցի գյումրեցու ջերմ ոգին, նրա խորը հավատքը հանդեպ Առաքելական մեր Մայր Եկեղեցին: Ես մեծ ուրախությամբ եմ այս սրբազան կամարների փակ ողջունում ներկայությունը պատվարժան զավակաց Գյումրի քաղաքի՝ գլխավորությամբ մարզպետի և քաղաքագլխի: Ուրախ եմ այստեղ ողջունելու ներկայությունը մեր սիրելի առաջնորդի՝ Կաթողիկոս Եկեղեցվո՝ Ներսես արքեպիսկոպոսի: Այս գեղեցիկ պահի համար ես ուզում եմ իմ գնահատանքը մասնավորապես հղել ձեր սիրելի առաջնորդական տեղապահին՝ Միքայել ծ. վրդ. Աջապահյանին, և իր գործակիցներին՝ թեմական վարչության անդամներին: Սա Մեր առաջին հովվապետական այցելությունն է ներքին թեմ և առաջին ուղևորությունը որոշեցինք կատարել Շիրակի մարզ, քանզի ամենից ավելի Շիրակի Մեր զավակները կարիքն ունեն գոտեպնդման, աղետի տակավին չամոքված ցավերի հաղթահարման:

Ըջմարիպ է, որ անցնող տասնամյակներում մեր ժողովրդին բաժին ընկած տառապանքների, ցավի, կսկիծի, փորձության մեծազույն բաժինը ընկավ գյումրեցիներին, Շիրակի մարզի մեր հավատարմոր զավակաց, բայց փառք և գոհություն եմ առ Աստված վերառաքում, որ տասը տարիների ընթացքին երբեք վիսպություն չդրսեվորեցին գյումրեցիք, երբեք չտկարացան իրենց հավատքի մեջ: Այսօր, մուտք գործելով այս եկեղեցի, դրա լավագույն վկայությունը և ապացույցը տեսա: Տեսա ձեր ջերմ

հավաքքը, որ բացառիկ է: Այդքն և Աստուծո ապալիմությունը ու մշտական, հաշտ-
յուն աղոթքներով շարունակեք գորացնել ձեր հավաքքը»:

Ապա Նորին Սրբությունն իր օրհնությունը փմեց բարեպաշտ գյուրնցիներին՝ կո-
չելով նրանց հավաքքի ու աղոթքի.

«Սիրելի գյուրնցիներ, ես եկել եմ Մայր Աթոռ Ս. Էջմիածնից ձեզ բերելու մեր
Նայրապետների և նրանց նվիրական նրազննող շնչող մեր միաբանության Ս. Էջ-
միածնի կամարների փակ աղոթող հավաքացյալ հոգիների աղոթքը և օրհնու-
թյունը: Եկել եմ նաև Իմ օրհնությունը բերելու ձեզ, որպես Նայրապետ Նայոց և շա-
ղախելու այն ձեր աղոթքներին, որպեսզի գորանա, ամրանա ձեր հավաքքը առ
Աստված, այն հավաքքը, որ 1700 փարիներ բազում փորձություններ է հաղթահա-
րել, այն հավաքքը, որին ապալինած մեր ժողովրդի զավակները և առավել նա դուք
պիտի կարողանաք հաղթահարել այն բոլոր դժվարությունները, այն բոլոր փորձու-
թյունները, որոնք այսօր բաժին են ընկել ձեզ և ծանրացել ձեր ուսերին: Մեր հա-
վաքքը անցել է հրի և սրի միջով: Մեր հավաքքը մշտապես հաղթություն է պար-
գնել մեզ, որովհետև մենք հավաքացել ենք Ավետարանի խոսքի ճշմարտությանը՝
թե «*այս հաւաքաւազէ իւսպառ, նա կեցցէ*» (Մատթ. Ժ 22): Սիրելի գյուրնցիներ,
որպես Նայրապետ Նայոց, իմ առաջին պապական մուրբով այս սուրբ փառաք պի-
տի լինի ձեզ ամբողջ կառչած մնալ ձեր պապերի ու հայրերի սրբազան հավաքքին:
Բայց ոչ որպես պապարանք ունենալու այն, այլ, ինչպես առաքյալը պիտի ասեր, հա-
վաքքը դարձնելով գորություն և ուժ՝ գործի, արարումի, աշխատանքի, այդ հա-
վաքքը փոխանցելով ձեր զավակներին, մեր մաքալ սերնդին:

Գալիս էի Մայր Աթոռ Ս. Էջմիածնից փոքր-ինչ մտառոգ, որ պիտի փնտրեմ փոր-
փում դեմքեր, պիտի փնտրեմ ցավի փակ կքած մարդիկ: Բայց մեծ էր իմ ուրախու-
թյունը, երբ ճանապարհին իմ առջև դուրս եկան փոքրիկ, անուշիկ, բաղցր բալիկներ,
որոնք իրենց երգ ու պարով փոթորկնցին Մեր հոգին, որոնց հայացքի մեջ եւ փնտա
գյուրնցու վաղվա պայծառ օրը: Այո, սիրելիներ, ես հավաքում եմ, որ սերը մեր
երեխաների նկատմամբ պիտի նոր ուժ պարգևի մեզ, պիտի կոչի մեր կամքը, մղե-
լով մեզ աշխատանքի, արարումի, շենացումի: Ահա այս սաղթանքով և այս աղոթ-
քով, սիրելիներ, ես իմ հայացքն եմ առ Աստված բարձրացնում և իմ ձեռքը դնելի եր-
կինը կարկառում հայցելով Տիրոջ սերն ու ողորմությունը մեր ժողովրդին և մեր
հայրենիքին, որպեսզի անաստան ու անույր մնա երկիրը հայոց և իր հավաքքին
կրթնած, իր հայրերի սրբազան հոգնադարձներին ապալինած մեր ժողովրդի բա-
րեպաշտ զավակներ:

Եկեք Տերունական աղոթքով, սիրելիներ, մեր հայոց միասին առ Աստված բարձ-
րացնենք՝ երկրի խաղաղության, մարդկանց բարօր և երջանիկ կյանքի համար: Թող
Տիրոջ սերը, ողորմությունը և առաք շնորհները բաշխվեն ձեզ՝ Մեր ժողովրդի զա-
վակաց և հանույ մարդկության այժմ և հավիպյալս. ամեն»:

Նույն օրը Վեհափառ Հայրապետը, իրեն ուղեկից Սրբազան Հայրերի ու առաջնորդական փեղապառի ընկերակցությամբ, այցելեց քաղաքի Անի թաղամասում կառուցվող Ս. Հակոբ եկեղեցու շինհրապարակ, ուր հուլիսի 29-ին Վեհափառ Հայրապետի հանդիսապետությամբ փեղի պետք է ունենար եկեղեցու հիմնարկերը: Նորին Սրբությունը մանրամասն ծանոթացավ շինարարական աշխատանքների ընթացքին, զրուցեց շինարարների հետ:

25 ՀՈՒՒՄԻ

ԱՅՅԵԼՈՒԹՅՈՒՆ ԱՌԱՓԻ, ՈՍԿԵՀԱՄԿ, ԱՄԱՍԻԱ ԵՎ ԱՇՈՅՔ

Հուլիսի 25-ին Վեհափառ Հայրապետն իր շնորհաբեր այցը կատարեց Գյումրիի մերձակա Առափի, Ոսկեհասկ և Շիրակի մարզի ծայր հյուսիսում գտնվող Ամասիա և Աշոցք գյուղերը: Ամենուր Հայոց Հայրապետի գալուստն ընդունվում էր բուռն ոգևորությամբ, մանուկների երգով ու արտասանությամբ: Վեհափառ Հայրապետի օրհնությունը սպանալու համար Հայոց Կաթողիկոսին ընդառաջ էին գալիս ծերեր ու մանուկներ, նորապսակ զույգեր: Հայրապետական իր օրհնությունը փալով հավաքավոր ժողովրդին, Նորին Սրբությունը նաև առիթ ու հնարավորություն էր ընձեռում նրանց՝ խոսելու իրենց հոգսերի ու մտահոգությունների մասին:

Վեհափառ Հայրապետին ուղեկցում էր Շիրակի մարզպետ Ֆելիքս Փիրումյանը: Նորին Սրբության շքախմբում էին Արարատյան Հայրապետական թեմի առաջնորդական փոխանորդ Ս. Նավասարդ եպս. Կոռյանը, Գուգարաց թեմի առաջնորդ Ս. Սեպուհ եպս. Զուլյանը, Շիրակի թեմի առաջնորդական փեղապառ Ս. Միքայել ծ. վրդ. Աջապահյանը, Ս. Մարկոս աբեղա Հովհաննիսյանը, Հոգեշնորհ և Արժանապատիվ Հայրեր:

Առաջին գյուղը, որ արժանացավ Ամենայն Հայոց Կաթողիկոսի օրհնաբեր այցին, 280-ամյա Առափին էր: Հավատապաշտ առապիցիների համար Նորին Սրբության այցը վերածվել էր ժողովրդական փոխախմբության: Դպրոցի բակում Վեհափառ Հայրապետին իրենց ողջույնը հղեցին գյուղի դպրոցականներն ու ուսուցիչները՝ սպանալով Նորին Սրբության օրհնությունը:

Նորին Սրբությունը գոհունակությամբ փեղեկացավ, որ այս փարվանից առապիցի դպրոցականը կծանոթանա նաև Հայ Առաքելական Եկեղեցու պատմությանը:

Հանդիպում ունենալով ակումբի մոտ հավաքված գյուղացիների հետ՝ Նորին Սրբությունն օրհնեց Առափի գյուղի բնակիչներին, ներկա գտնվեց գյուղացիներին հողի սեփականաշնորհման վկայագրերի հանձնմանը:

Վեհափառ Հայրապետի գլխավոր պատգամը Առափիի, ինչպես նաև մյուս գյուղերի բնակիչներին նույնն էր՝ հավաքարիմ ու անդալաճան մնալ 1700 փարիների ճանապարհի անցած Հայ Եկեղեցու սրբազան հավատքին՝ կառաճ լինելով հայրենի

օջախին, սեր և նախանձախնդրություն ցուցաբերելով միմյանց և սեփական գյուղի նկատմամբ:

Գրեթե բոլոր գյուղերը, ուր այցելում էր Վեհափառ Հայրապետը, չունեին իրենց աղոթքի փուլը: Եվ հաճախ գյուղացիները դիմում էին Նորին Սրբությանը՝ նոր եկեղեցի կառուցելու խնդրանքով: Այդպես էր նաև Առափիում, որի եկեղեցին հիմնահասկալակ ավերվել է խորհրդային անաստվածության փարիսեերին:

Գրեթե նույնն էին նաև մյուս գյուղացիների հոգսերն ու մտահոգությունները: Սոցիալական դժվարություններից ու այս փարվա երաշտից հոգնաբեկ գյուղացին ակնկալում էր Վեհափառ Հայրապետի աջակցությունը նաև այս հարցերում:

Հաճախ հայ գյուղացին իր փազնապն էր արտահայտում օտարամուտ աղանդների նաև սեփական շեներ ներթափանցման առնչությամբ:

«ՄԵՐ ԵՐԵԽԱՆԵՐԻ ՀՊԱՐՏՈՒԹՅՈՒՆԸ ՀՈՂ ՀԱՅՐԵՆԻՆ Է»

Հաջորդ գյուղը Ոսկեհասկն էր: Այսպեղ կրկին նույն խանդավառությունն էր փիռում: 20-ական թվականներին մշեցի փախստականներով բնակեցված Ոսկեհասկը, որպեղ պահվում են հայրենի երկրից բերված սրբազան մասունքներ, նույնպես չունի իր եկեղեցին:

Մյուս մտահոգությունը գյուղացիների արտագաղթն է, որ առկա է ոչ միայն այս գյուղում: Եվ ամենուր հնչում էր հայրենի հողին ու ավանդույթներին հավատարիմ մնալու հայրապետական հորդորն ու պարգամբ:

«Մեկնում են հայրորդիք նորից գաղթականության ցուպն ի ձեռին»: Անշուշտ, ցավ է դա, ինչպես յուրաքանչյուր հայրորդու, այնպես էլ Հայոց Հայրապետիս համար: Մեր ժողովրդի գավակուք ապրել են իրենց նվիրական սրբազան հողի վրա և պաշտպանել հայրենին: Մեր ժողովրդի գոյության երաշխիքը եղել է ու պիտի մնա մեր ժողովրդի ամուր, հաստատուր հավաքը առ Աստված: Այսօր, սակայն, այցելելով գյուղեր, նշմարում ենք, որ բավականին հեռացել ենք մենք մեր հայրերի հավաքից: Ինչպե՛ն կարող ենք ունենալ վստահություն վաղվա օրվա նկատմամբ, երբ մենք ինքնակամ հրաժարվում ենք այն բոլոր արժեքներից, որ մեր գոյության երաշխիքն են եղել մեր պատմության ողջ ընթացքին, երբ փեղիք ենք փալիս դժվարություններին և գաղթականի ցուպը վերցնելով՝ բռնում օտարության ճանապարհը: Թափառական դառնալով, արմատախիլ անելով մեր երեխաներին այս հողից, չենք կարող չգրկել նրանց իրենց հպարտությունից, որ հող հայրենին է, հայրենի գյուղը»,- ասաց Նորին Սրբությունը:

«ՀԱՎԱՏԱՐԻՄ ԼԻՆԵՆԷ ՀԱՅՐԱԿԱՆ ԱՎԱՆԴՆԵՐԻՆ»

Ոսկեհասկից Նորին Սրբությունը մեկնեց Ամասիա:

Վեհափառ Հայրապետը եղավ գյուղի իրականացնողում, հոգևոր ուսյրների հեղ մեկտեղ աղոթք ինչնցրեց արցախյան ազապասնարդիկներին նվիրված հուշարձանի մոտ, ապա հանդիպում ունեցավ նաև ամասիացիներին հետ, իր օրոնությունը քսեց նրանց, պապասխանեց նրանց հապաքաբաղ հարցերին:

Առկա խնդիրները կրկին նույնն էին. մեծ ջարերի հասնող արվազաղթ, գյուղը կամենում է ունենալ իր եկեղեցին, և առավել քան օրախնդրի ծարց մեծ թվով աղանդավորներ, որոնք համապաղաղիներին վրդովմունքն ու գայրույթն են առաջ բերում:

«Երբ անցնում էի փողոցներով, քնսանելի էր, որ այս քաղաքը ունեցել է գեղեցիկ կյանքի մի շրջան: Բայց այսօր խամրել է քաղաքի պայծառ քնսքը, նշմարվում է տկարություն բնակիչների մոտ՝ լինի քնստական, լինի նաև հոգևոր առումով, որովհետև որոշ է և ճշմարիտ, որ ազգների, ժողովուրդների կյանքը, քնստական վիճակը արտահայտությունն ու դրսևորումն է նրանց հոգևոր գոյավիճակի ու ապրումների:

Հիմնական բացը, որ ունենք, սերն է և միասնության ոգին: Համապարած է կարիքը, որի հաղթահարման համար պետք է որ անհուն սեր ունենանք միմյանց նկատմամբ, հավաքարիմ լինենք հայրենական ավանդներին», - ազգային արժեքներին հավաքարիմ մնալու, ժողովրդի ոգին քայքայող այլապաղան քարոզություններից հեռու մնալու և միմյանց նկատմամբ անվերապահ սեր ունենալու հորաբուրով դիմեց ամասիացիներին Հայոց Հայրապետը:

«ԱՆԹՈՒՅՆԱՏՐԵԼԻ ԵՆ ՎՏԱՏՈՒԹՅՈՒՆՆ ՈՒ ՏԿԱՐՈՒԹՅՈՒՆԸ»

Հաջորդ գյուղը, որ դիմավորեց Վեհափառ Հայրապետին, Աշոցքն էր, որ ժամանակին արժանացել է նաև երջանկահիշարակ Գարեգին Ա Կաթողիկոսի օրհնաբեր այցին:

Գյուղի կենտրոնում Նորին Սրբության օրհնությանն ու պապաամին էին սպասում խանդավառ հավաքացյալներ:

«Հայոց Հայրապետիս համար միտթարություն է շրջապաղված լինել հավաքափոր ժողովրդի գավակներով: Եվ սակայն քնսնում եմ դժվարությունների մեջ ապրող ժողովուրդ, որը պայքար է մղում իր գաղիքի համար: Անթույլաքրելի են փհաշությունն ու տկարությունը, որովհետև նա, ով ապավինում է Աստծուն, գիտե և նրա անպարփակ սիրտ մասին: Ազապությունը դյուրությամբ ձեռք ջրեցիցին: Ազապության համար պետք է վճարենք: Դժբախաբար ջրնօրինվեց այնպես, որ մեր վճարման գինը ցածր լինեք: Ավելիով ենք վճարում: Բայց հավաքով, որ այդ ազապու-

թյունը օրինություն է բերելու մեր ժողովրդին», - գյուղի բնակիչներին ոգեկոչեց Վեհափառ Հայրապետը:

Այա Վեհափառ Հայրապետը իր քայլերն ուղղեց գյուղի խոնարհված և խարխուլ Ս. Աստվածածին եկեղեցի, ուր հոգևոր հայրերի հետ մեկտեղ աղոթք հնչեցրեց առ Աստված:

Հայոց Հայրապետի համար առավել մրախոզիչ էր եկեղեցի փանող ճանապարհի անմխիթար ու անմաքուր վիճակը, որ աղոթքի փան հանդեպ ունեցած գյուղացու անհոգ վերաբերմունքի արդյունք նկատեց՝ ժառանգած անաստվածության 70 տարիներից:

Աշոցքում Նորին Սրբությունը եղավ նաև Կաթողիկե քույր Եկեղեցու կողմից հիմնրված բարեկարգ ու հարմարավետ Տիրամայր Նարեկ հիվանդանոցում և իր անկեղծ հիացմունքը հայրենեց աշխատակիցներին՝ երկրաշարժից հետո գործող այս հիվանդանոցի գոյությունը համարելով Կաթողիկե Եկեղեցու հետ ունեցած բարի հարաբերությունների լավագույն արտահայտություն:

Ուշ երեկոյան, ավարտելով այցը Շիրակի չորս գյուղեր, Վեհափառ Հայրապետը վերադարձավ Գյումրի:

26 ՀՈՒՆԻՍԻ


ԱՅՅԵԼՈՒԹՅՈՒՆ ՀՈՌՈՄ, ՓԱՆԻԿ, ՄԵԾ ԵՎ ՓՈՔՐ ՄԱՆԹԱՇ ԳՅՈՒՂԵՐԸ

Հուլիսի 26-ին Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսը շարունակեց իր հովվապետական այցը Շիրակի գյուղեր՝ իր օրհնությունն այս անգամ փալով Հոռոմ, Փանիկ, Մեծ և Փոքր Մանթաշ գյուղերի բնակիչներին:

«ՓՈՐՉԵՆՔ ՄԵՐ ԿՅԱՆՔԸ ԿԱԶՄԱԿԵՐՂԵԼ ԱՍՏԾՈՒՆ ԵՎ ԱՂՈԹՔԻՆ ԱՊԱՎԻՆԱԾ»

ՀՈՌՈՄ

Վաղ առավոտյան Վեհափառ Հայրապետը շքախմբով մեկնեց Շիրակի հինավուրց Հոռոմ գյուղ: Ինչպես վկայում են հոռոմցիները, գյուղը հիմնվել է Գագիկ թագավորի Հոռոմսի անունով դարեր շնորհիվ: Տասնյակ հարյուրամյակների պարմություն ունեցող գյուղում ավերված ու խոնարհված գմբեթով կանգնած է միայն 19-րդ դարի Ս. Հռիփսիմն եկեղեցին և փոքրիկ մատուռը՝ գյուղի գերեզմանատարանը: Քանդված եկեղեցում Նորին Սրբությունը աղոթք բարձրացրեց առ Աստված, ապա և կա-



փարեց հոգեհանգստյան արարողություն՝ այդ օրերին Ֆրանսիայում Կեղի ունեցած ավիաթարի զոհերի համար:

Իր օրհնությունը փալով եկեղեցու բակում հավաքված գյուղացիներին՝ Նորին Սրբությունը լսեց նաև նրանց փրկունքները սոցիալ-փնտեսական դժվարությունների մասին:

«Աստվածմերժության փարիները իրենց հեղուկ թողել են, ինչպես փեսնում ենք մեր հոգեբանության, մեր մտայնության, մեր զգացումների վրա ինչպես ազգային կյանքում, այնպես էլ՝ հոգևոր: Տեսա, որ մեր կյանքի դժվարությունները մեծապես հեղուկ են առ Աստված մեր ունեցած հարաբերության և դեպի Աստված ունեցած մեր կեցվածքի: Կյանքը օր օրի դժվարանում է և ոչ ուրիշի մեղքով. բացառաբար մեր մեղքով: Քանզի մեր ճանապարհը չի առաջնորդում մեզ դեպի Աստված: Փորձենք մեր կյանքը կազմակերպել Աստծուն և աղոթքին ապավինած», - ասաց Վեհափառ Հայրապետը՝ մեկ անգամ ևս ցավով նկատելով խորհրդային փարիներից ժառանգած աստվածամերժության հեղուկները, որի վկան այս անգամ եկեղեցու նկարամամբ անսարքերությունն է:

«ՄԵՐ ՈՒ ՈՂՈՐՄԱԾՈՒԹՅՈՒՆ ԿԱԹՈՂԻԿԵ ՀԱՎԱՏԱՅՅԱԼ ԶԱՎԱԿԱՅ ՎՐԱ»

ՓԱՆԻԿ

Հաջորդ գյուղը Փանիկն էր, ուր Վեհափառ Հայրապետին դիմավորեցին հայ Կաթողիկե Ս. Տիրամայր եկեղեցու դոդանջներով ու «Հրաշափառ»-ով: Ողջունելով Ամենայն Հայոց Կաթողիկոսի գալուստը՝ Հայաստանի, Վրաստանի և Արևելյան Եվրոպայի հայ կաթողիկե համայնքի առաջնորդ Ս. Ներսես արքեպս. Ներսեսյանը աղոթքի կոչեց ներկաներին՝ Վեհափառ Հայրապետի աստվածանվեր առաքելության համար: Որպես նաև իր հարազատ զավակների՝ Ամենայն Հայոց Կաթողիկոսն իր օրհնությունը փվեց Փանիկի հայրողիներին և իր գնահատանքը հայտնեց Ներսես Սրբազանին:

«Որպես Կաթողիկոս Ամենայն Հայոց, կատարելով հովվապետական այց Շիրակի թեմ, հայրապետական իմ օրհնությունն եմ բերում Մայր Աթոռ Ս. Էջմիածնից, որի Ս. Մյուռոնը շարերիդ կուրծքն ու ճակատն է զարդարում, որով օժվել եք դուք, երբ չունեիք ձեր հոգևոր առաջնորդը: Առաքելական Մայր Եկեղեցին հարազատ զավակաց պես իր հովվությունն էր կատարում և առաջնորդությունը փարածում ձեզ վրա: Այսօր էլ ջերմ զգացումներով կանգնած ենք սուրբ այս խորանի առջև և մեր օրհնություններն ենք բաշխում ձեզ՝ որպես մեր հարազատ զավակների, և հայցում, որ կանաչ Մյուռոնը, որ դրոշմված է ձեր կրծքին ու ճակատին, սուրբ հոգու շնորհներով զարդարի ձեզ, հեղի Տիրոջ՝ մեր Հայր Աստծո սերն ու ողորմածությունը կաթողիկե

հավաքացյալ զավակաց վրա»,- հայ կաթողիկե համայնքին իր օրհնությունը բաշխեց Ամենայն Հայոց Կաթողիկոսը:

Փանիկում Նորին Սրբությունը ծաղիկներ դրեց Կոմիտաս վրդ. Մանուկյանի շիրիմին, որի ջանքերով վերանորոգվել են գյուղի եկեղեցին ու հիվանդանոցը:

«ՈՐՊԵՍՋԻ ԵԿԵՂԵՑԻՆ ՄԻՇՏ ՄՆԱ ԱՂՈԹՔԻ ՏՈՒՆ»

ՄԵԾ ԵՎ ՓՈՔՐ ՄԱՆՔ-ԱՇՆԵՐ

Ուղևորվելով Մեծ և Փոքր Մանթաշներ, Նորին Սրբությունը չնախադեսված կանգառ ունեցավ Արևշատ գյուղում, որի ճանապարհին հավաքված խումներամ բազմությունը սպասում էր Վեհափառ Հայրապետի օրհնությանը: Նորին Սրբությունը ուրախությամբ փեղեկացավ, որ արդեն մեկ փարի է, ինչ գյուղացիների ջանքերով սկսվել է Արևշատի խոնարհված եկեղեցու վերանորոգությունը:

Աննկարագրելի խանդավառություն էր փիրում Մեծ Մանթաշ և Փոքր Մանթաշ հարևան գյուղերում, որոնք երկուսն էլ առաջին անգամ էին արժանանում Ամենայն Հայոց Կաթողիկոսի շնորհաբեր այցին:

Ծրջապարված հավաքավոր գյուղացիների հոծ բազմությամբ, Վեհափառ Հայրապետը այցելեց նախ Մեծ Մանթաշի Ս. Աստվածածին եկեղեցի: Ծիրակի գյուղերում շարունակ խոնարհված եկեղեցիների ականաբեսը լինելով՝ Նորին Սրբությունը փառք և գոհություն առաքեց առ Աստված՝ առաջին անգամ շեն ու կանգուն եկեղեցի փեսնելու համար:

«Իրապես զգում ենք, թե որքան կարոտ կա ձեր մեջ հայ եկեղեցականի ներկայությունն ունենալու, նրա օրհնությունն առնելու, նրա պարգամն ու խոսքը լսելու: Փա՛րք ու գոհություն առ Աստված, որ այսպես շեն եկեղեցու հարկի փակ ենք: Ուրախ լեր, Ս. եկեղեցի:

Ես ինձ հեկո պիտի փրանեմ այս գեղեցիկ հուշը, որ առանձնանում է իր փեսակի մեջ այս օրերին մեր ունեցած հանդիպումներից փարբեր գյուղերի հավաքացյալների հեկո:

Ես իմ աղոթքն եմ բարձրացնում, որպեսզի այլևս երբեք անհավաք մարդկանց ձեռքերով հավաքավոր ժողովրդի առջև չփակվեն աղոթքի փաճարները, որպեսզի Տերը չարքունի, որ չարի ձեռքերը ավերեն գործեն աղոթքի մեր անդասարաններից ներս, և անհավաքությունն այլևս երբեք փեղ չգտնի մեր կյանքում, որ եկեղեցին միշտ լինի աղոթքի փուն՝ սրբագործող իր գործությամբ»,- իր գոհունակությունը հայտնեց Վեհափառ Հայրապետը: Օրը նշանակալի էր նաև նորապսակ գույգի համար, որ արժանացավ Վեհափառ Հայրապետի օրհնությանը:

Ապա Վեհափառ Հայրապետը ճանապարհվեց Փոքր Մանթաշ: Խոնարհված եկեղեցում փոքրիկ աղջնակի շուրթերից դուրս եկած Ս. Ներսես Շնորհալու «Առա-

վոր Լուսո»-ն մանթաշցու անկեղծ ու ամուր հավաքի վկայություն էր: Նորին Սրբությունը հոգևոր հայրերի հետ մեկտեղ աղոթք հնչեցրեց աղոթքի այս փաճարում և ապա՝ երկու Մանթաշները միմյանցից զափող պարբերազմի գոհերի հուշարձանի մոտ: Փոքր Մանթաշի բազմամարդ հրապարակում Վեհափառ Հայրապետը հորդորեց ապավինել Աստծո գործությանը և դիմագրավել բոլոր դժվարություններին:

Բոլոր այս գյուղերում Վեհափառ Հայրապետը այցելում էր կարիքավորների ու զոհված ազապամարտիկների փներ՝ օրհնություն ու մխիթարություն փանելով իր հետ:

27 ՀՈՒՆԻՍԻ

ԱՅՅԵԼՈՒԹՅՈՒՆ ԱՄՈՒՐՅԱՆ, ԱԶԱՏԱՆ, ՊԵՄՋԱՇԵՆ ԵՎ ՍԱՐՆԱՐԲՅՈՒՐ

Հուլիսի 27-ին Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսը, լինելով Շիրակի Ախուրյան, Ազապան, Պեմճաշեն և Սառնաղբյուր գյուղերում, եզրափակեց իր այցելությունը Շիրակի թեմի 12 խոշորագույն գյուղերով:

«Ժողովուրդն անշուշտ ծանր կացության մեջ է և իր դժգոհությունն արտահայտում է նաև մեզ: Ամբողջ այս ճամփորդության ընթացքին մենք տեսանք, որ կենդանի է հավաքվել, ամուր ու անսասան, տեսանք հավաքի բուռն դրսևորումն ու ջերմ արտահայտությունը, և ինձ համար դա մեծ մխիթարություն է: Փորձեցինք նաև նրանց մխիթարել, հանգստացնել՝ թույլ տալով, որ արտահայտվեն իրենց դժվարությունների մասին», - իր փալավորությունները կիսեց Վեհափառ Հայրապետը:

Վերջին չորս գյուղերում Նորին Սրբությունը կրկին հանդիպումներ ունեցավ և իր հայրապետական օրհնությունը բաշխեց շիրակցի շինականներին, եղավ հիվանդանոցներում, կարիքավորների, զոհված ազապամարտիկների փներում, աղոթք բարձրացրեց կանգուն և խոնարհված եկեղեցիներում:

ԱՄՈՒՐՅԱՆ

Ախուրյանում Վեհափառ Հայրապետը ներկա եղավ նախկին շրջկենտրոնի շենքում գյուղի դպրոցի բացմանը՝ նշելով, որ դպրոցի բացումը մեծագույն ուրախություն է հարկապես այս օրերին, երբ շիրակցի շատ երեխաներ իրենց դասերն անց են կացնում փնակներում: Նորին Սրբությունը իր օրհնությունը փվեց աշակերտներին և ուսուցիչներին, ապա այցելեց երկրաշարժից հետո գյուղի վերագործարկված կարի և կահույքի արտադրամասեր, եղավ մանկապարտեզում, ՀՕՄ-ի հովանավորությունը վայելող ամառային կենտրոնում և Նիկոլ Աղբալյանի անունը կրող վարժարանում:

Ախուրյանում գյուղացիները կրկին ակնկալում էին Վեհափառ Հայրապետի օժանդակությունը խոնարհված եկեղեցու վերականգնման գործում:

Ցավոք, Հայ Եկեղեցին չունի բավարար հնարավորություններ բոլոր այդ խընդրանքներն իրականացնելու համար, սակայն, ինչպես Վեհափառ Հայրապետը նշեց, առավել կարևոր է *«հոգու եկեղեցու վերակերպումը, որ առաջին նախապայմանն է քարեղեն կառույցների վերանորոգման, նաև մեր օջախի, մեր կյանքի շինության համար»*:

ԱԶԱՏԱՆ

Ազատանն այն երջանիկ գյուղերից է, որ ունի բարեկարգ եկեղեցի և սակայն չունի իր մնայուն հոգևոր հովիվը: Մ. Հարություն եկեղեցին վերաբացվել է անցած տարի երջանկահիշապակ Գարեգին Ա Կաթողիկոսի ջանքերով և բեյրութաբնակ Հարություն, Մարի և Գրիգոր Արալանյանների հովանավորությամբ: «Հրաշափառ»-ով մուտք գործելով եկեղեցի՝ Նորին Սրբությունը իր օրհնությունը փոխանցեց հավաքավոր ազատացիներին, որպեսզի շեն ու պայծառ պահեն հավատքի փունջը: Այսպես, այցելեց հայ կաթողիկե համայնքի Ս. Տիրամայր եկեղեցի:

Ազատանի Հայրենական Մեծ պատերազմի գոհերի հուշարձանի մոտ Նորին Սրբությունն աղոթեց բոլոր հայորդիների համար՝ նահապտակված Մեծ եղեռնի, Երկրորդ համաշխարհայինի տարիներին և Արցախի գոյամարտում:

«Ազատության համար թանկ ենք վճարում, բայց պիտի գիտնանք ձեռք բերված ազատությունը հավերժական, անշրջելի դարձնել: Իսկ դա հնարավոր է, եթե ունենք հզոր երկիր և անսպարելի բանակ, բայց՝ ոչ բավարար: Անհրաժեշտ է նաև հզոր ոգի ու հավատք, որոնցով պիտի առաջնորդվեն երկիրը և ժողովուրդը մեր: Բոլորը պիտի գիտենան, որ հայրենիքի զինվորյալ սպասավորներն են»:

Մենք գնահատում ենք այն սերը, որ այս օրերին տեսանք հանդեպ Եկեղեցին և Լուսավորչի գահին բազմած Ամենայն Հայոց Հայրապետը: Այդ սերը մեզ որքան քաղդ է, նույնքան պարտավորեցնող ու ծանր լուծ է, որովհետև այս օրերին ծով կարիքներ տեսանք մեր ժողովրդի զավակաց մոտ: Այս օրը, սիրելիներ, կարող էինք խնայել մեզ՝ իբրև ազգ և ժողովուրդ: Միասնական ջանքերով ու առ Աստված անկեղծ հավատով մենք կարող ենք փոխել կյանքի ընթացքը», - ասաց Վեհափառ Հայրապետը:

ՊԵՄՁԱՇԵՆ

Խոնարհված հինավուրց եկեղեցիներով հարուստ է Պեմզաշենը: Վեհափառ Հայրապետն իր օրհնաբեր այցը փալով պեմզաշենցիներին՝ այցելեց գյուղ տանող ճա-

նապարհին և Պեմգաշենում գտնվող Ս. Առաքելոց վանք, Մակարավանք, Եռախորան եկեղեցական համալիր ու ամենուր աղոթք բարձրացրեց առ Աստված:

Վեհափառ Հայրապետն այցելեց նաև արցախյան գոյամարտում զոհված պեմգաշենցիների շիրիմին՝ իր հարգանքի փութքը մատուցելով նրանց հիշատակին:

ՍԱՌՆԱԴՐՅՈՒՐ

Նորին Սրբության անդրանիկ այցը մեծ ոգևորությամբ դիմավորեցին նաև Սառնաղբյուր գյուղում: Ս. Թադևոս առաքյալի անունը կրող եկեղեցում Վեհափառ Հայրապետն իր օրհնությունն ու պարգամը փվեց սառնաղբյուրցիներին՝ կրկին կոչելով հավաքելի ու ամրության: Վեհափառ Հայրապետը եղավ նաև գյուղի ծայրին գտնվող Ս. Գրիգոր Լուսավորչի քարանձավում, ուր, ըստ ավանդության, ճգնել է հայոց առաջին Կաթողիկոսը:

ԱՅՅԵԼՈՒԹՅՈՒՆ ԱՐԹԻԿ ԵՎ ՄԱՐԱԼԻԿ

Վեհափառ Հայրապետը հովվապետական այցի վերջին երեք օրերն անցկացրեց թեմի Արթիկ, Մարալիկ և Գյումրի քաղաքներում՝ շարունակելով աղոթքը Շիրակ աշխարհի բարօրության համար, այցելելով կրթական-մշակութային օջախներ, հանդիպումներ ունենալով ժողովրդի հետ, Հայրապետական օրհնություն և պարգամ փոխանցելով շիրակցիներին:

28 ՀՈՒՆԻՍԻ

ԱՅՅԵԼՈՒԹՅՈՒՆ ՀԱՌԻՃԱՎԱՆՔ, ԱՐԹԻԿ ԵՎ ՄԱՐԱԼԻԿ

Հուլիսի 28-ին Վեհափառ Հայրապետը հովվապետական այցը շարունակեց Արթիկ և Մարալիկ քաղաքներում, մինչ այդ լինելով նաև նշանավոր Հառիճավանքում: 7-13 դդ. փառահեղ այս վանքում իրականացվում են վերականգնման աշխատանքներ, որի ավարտը նախատեսվում է եկող տարի՝ ի նշանավորումն Հայաստանում քրիստոնեության պետական կրոն հռչակման 1700-ամյակի: Վեհափառ Հայրապետը ծանոթացավ վերականգնման աշխատանքներին, ապա իր օրհնությունը փվեց ներկա հավաքացյալներին:

«Մենք հավատում ենք, որ նոր կյանքով պիտի սկսի ապրել Հառիճավանքը, որ տարիներ անց պիտի ունենա իր հոգևոր միաբանությունը և այսօրեղ հաստատված ընծայարանի միջոցով պիտի կարողանա լուսավորել մեր ժողովրդի հավաքքը, որ 1700 տարիներ մեր եկեղեցական սպասավորների անձնվեր ջանքերով ու աշխատանքով պահպանվել ու ժառանգվել է մեզ», - ասաց Վեհափառ Հայրապետը:

Հայոց Հայրապետի մտածումով Հառիճավանքի վերականգնման ավարտին այսպեղ է տեղափոխվելու Գյումրիի հոգևոր դպրոցը ընծայարանը:

ԱՐԹԻԿ

Արթիկում Վեհափառ Հայրապետի առաջին այցը ուղղիչ աշխարանքային գաղութն էր: Նորին Սրբությունը իր օրհնությունը տվեց կալանավորներին, եղավ նրանց ննջարաններում: Տեսնելով շաբերի սնարին Քրիստոսի պատկերը, Վեհափառ Հայրապետը հույս հայտնեց, որ նրանցից յուրաքանչյուրը կունենա իր անդրադարձումի պահը և դուրս գալով մեկուսարանից, կապրի ազնիվ ու հայրենանվեր կյանքով, որի նախապայմանը հավատքն է առ Քրիստոս:

Նրանց հավատքի ամրապնդմանը կօգնեն նաև Հայոց Հայրապետի՝ կալանավայրին նվիրած Աստվածաշունչ գրքերը և հաճախակի այն այցելությունները, որ կատարում է կալանավորներին Շիրակի թեմի առաջնորդական տեղապահ Ս. Միքայել ծ. վրդ. Աջապահյանը:

ԱՐԹԻԿԻ Ս. ԱՍՏՎԱԾԱԾԻՆ ԵԿԵՂԵՅՈՒՄ

Արթիկի խոնարհված Ս. Աստվածածին եկեղեցում քաղաքի բարեպաշտ հավատացյալները՝ համայնքի անդամները, Հայոց Կաթողիկոսին դիմավորեցին աղոթքով ու հայրապետական մաղթանքով: 7-12 դդ. կառուցված եկեղեցին հայկական բացառիկ շինություններից է, որի վերականգնումը, ինչպես վստահեցրեց Վեհափառ Հայրապետը, կգտնի իր բարերարին, և Արթիկի հավատալիքի ժողովուրդն իր աղոթքն առ Աստված կարող է բարձրացնել գործող ու բարեկարգ եկեղեցում:

Նորին Սրբությունը տվեց հայրապետական իր օրհնությունը Արթիկի հավատալիքի համայնքին:

ՎԵՏԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏՆ ԱՅՅԵԼԵՅ ԱՐԹԻԿԻ ՄՇԱԿՈՒՅԹԻ ՏՈՒՆ

Արթիկի մշակույթի տանը կայացած հանդիպմանը Նորին Սրբությունն իր խոսքն ուղղեց երեխաներին, որոնք Հայոց Հայրապետին դիմավորեցին Տերունական աղոթքով ու Հայրապետական մաղթանքով: Ինչպես նշեց Վեհափառ Հայրապետը, ազգային կյանքում երկրորդ կարևորագույն հաստատությունը եկեղեցուց հետո հայ դպրոցն է ու մշակութային օջախը:

Նորին Սրբությունը երեխաներին պարմեց Երևանի հայտրոյաց տների մասին, որի 180 խմբակներին հաճախում են հազարավոր երեխաներ: Իր օրհնությունը տա-

յով մանուկներին, Վեհափառ Հայրապետը հրավիրեց նրանց լինելու Մայր Աթոռ Ս. Էջմիածնի հյուրը, այցելել հայորդյաց փոքրիկ իրենց հասակակիցներին:

Արթիկում Վեհափառ Հայրապետը այցելեց նաև նորաբաց ոսկերչական արտադրամաս, Ս. Նարեկ բուժարան:

ՈՒՆՏԱԳՆԱՅՈՒԹՅՈՒՆ ԼՄԲԱՏԻ ՎԱՆԸ

Աննկարագրելի խանդավառություն էր տիրում նաև Արթիկի մերձակա Լմբարի վանքի բարձունքում: Նաև Կարմիր վանք կոչվող 7-րդ դարի այս սրբավայրը արթիկցի հավաքացյալի սիրված սրբավայրն է: Վեհափառ Հայրապետի օրհնությունն ստանալու եկած հավաքացյալ բազմությունը ծածկել էր ողջ բարձունքը: Իր օրհնությունը տալով Լմբարի ուխտավորներին, Նորին Սրբությունը մեկնեց Մարալիկ:

ՄԱՐԱԼԻԿ

Այցելելով Մարալիկ, Հայոց Հայրապետն ու նրան ուղեկից Սրբազան Հայրերը կրկին ու կրկին անգամ հավաքքի ու հոգևոր արթնության հրավիրեցին ժողովրդին: Այսպես Նորին Սրբությունը եղավ Ս. Ամենափրկիչ եկեղեցում, մասնակցեց Արցախի գոհերի հիշատակին նվիրված խաչքար-հուշարձանի բացմանը:

«ԻՆչև է լինելու մեր կյանքի նշանաբանը: Դժվարությունների առջև ծնկե՛ր, թե՛ այդ դժվարությունները հերոսաբար հաղթահարել: Դժվարությունները մերն են, և դժգոհությամբ նրանցից չենք կարող զերծ մնալ ու խուսափել: Դժվարությունները կարող ենք հաղթահարել ոգի և կամք դրսևորելով», - ամենաբազմազան հոգսերով ապրող մարալիկցուն ոգեկոչման իր խոսքն ուղղեց Վեհափառ Հայրապետը:

Եվ, թերևս, ամենացանկալի ավերիսն էր, երբ Նորին Սրբությունը իրեն ընկերակցող մարգարեից տեղեկանալով, հայտնեց, որ 14 օր ջրից ամբողջովին զրկված քաղաքը վերջապես ջուր կունենա, կբաշխվեն նաև երկար սպասված թոշակները:

Ս. Աստվածածին եկեղեցում Նորին Սրբությունը մեկ անգամ ևս հավաքքի ու վերարթնության հորդոր ուղղեց Մարալիկի հավաքավոր ժողովրդին. *«Ուզում ենք Աստծու բարեգոյությունը, ակնկալում ենք Աստծու սերը, ցանկանում ենք Աստծո ուղորմածությունը, ցանկանում ենք, որ երկնքից Աստծո օրհնությունը իջնի հայոց հողի վրա: Բայց ինչպե՛ս: Միայն աշխատանքով ու աղոթքով: Միայն, երբ մենք հոգով, մեր զգացումներով, մեր գիտակցությամբ կանդորդաշունքանք, որ աշխարհի բոլոր բարիքները, բոլոր շնորհները, բոլոր պարգևները Աստծուց են պրկվում, այնժամ մենք կկարողանանք առավուրդի արշալույսի բացման հետ ուրախությունը ողջունել մեր հարկերից ներս»*:

Վեհափառ Հայրապետն այցելեց նաև Մարալիկի գեղարվեստի դպրոց, ուր առիթ ունեցավ հիանալու դպրոցի սաների ձեռագործ աշխատանքներով և խոստացավ օժանդակել նրանց անհրաժեշտ նյութեր ունենալու համար:

Օրվա վերջում Մարալիկի մշակույթի փանը փեղի ունեցավ հանդիպում Նորին Սրբության հետ, որն ավարտվեց ի պատիվ Վեհափառ Հայրապետի կազմակերպված համերգով:

ԳՅՈՒՄՐԻ

Ս. ՀԱԿՈՐ ԵԿԵՂԵՑՈՒ ՀԻՄՆԱՐԿԵՐԸ

Հիշարժան էր հուլիսի 29-ին Գյումրիի նորակառույց Անի թաղամասում Ս. Հակոբ եկեղեցու հիմնարկերի արարողությունը՝ հանդիսապետությամբ Ամենայն Հայոց Հայրապետի: Արարապյան Հայրապետական թեմի առաջնորդական փոխանորդ Ս. Նավասարդ՝ եպս. Կճոյանի, Արմավիրի թեմի առաջնորդի պաշտոնակատար Ս. Գրիգորիս արքեպս. Բունիաթյանի, Գուգարաց թեմի առաջնորդ Ս. Սեպուհ եպս. Զուլյանի, Շիրակի թեմում 19 փարիսներ առաջնորդած Ս. Նարեկ եպս. Շաքարյանի, Շիրակի թեմի առաջնորդական փեղապահ Ս. Միքայել ծ. վրդ. Աջապահյանի և պատվարժան գյումրեցիների մասնակցությամբ օծվեցին եկեղեցու բոլոր հիմնաքարերը:

««Եկայք շինեսցուք սուրբ զխորանն լուսոյ, քանզի ի սմա ծագեաց մեզ լոյս ի Հայաստան աշխարհի». այս աղոթքով հիմները դրվեցին եկեղեցու, հավաքքով, որ եկեղեցու ճառագող օրհնությունը պիտի գորացնի հավաքքը, պիտի ամրացնի հույսը մեր բարեպաշտ հավաքավոր զավակաց Գյումրիի և պիտի ցրի խավարը աղանդավորական, որ հատկապես այս վերջին փասնամյակում եկել է ավերիչ գործունեություն իրականացնելու Հայաստան աշխարհում հայ հավաքացյալի հոգուց ներս, հայ ընդանիքում ու օջախում: Մենք հավաքում ենք, որ այս եկեղեցում հայ հավաքացյալը Գյումրիի աղոթքով պիտի կարողանա շարունակել հրաշագործել՝ կերպելով մեր ժողովրդի բարօր ընթացքը», - ասաց Վեհափառ Հայրապետը:

Ս. Հակոբ եկեղեցին վեր է խոյանում շնորհիվ ամերիկահայ բարերար Մարգիս Հակոբյանի, որ եկեղեցի կառուցելու մրառնագում է ունեցել ի սեր իր փոքրիկ թոռնիկի՝ Անի Արաքսի: Եկեղեցին, որ իր չափերով կգերազանցի առաջնորդանիստ Ս. Յոթվերջ եկեղեցուն, կառուցվում է ճարտարապետ Բաղդիկ Արզումանյանի նախագծով, որի հեղինակությամբ հայրնի են բազմաթիվ այլ եկեղեցիներ Հայաստանում և արտերկրում:

Գյումրին, իբրև եկեղեցասեր ու ավանդապահ քաղաք, հայրնի է իր եկեղեցիներով: Վեհափառ Հայրապետը եղավ նաև Գյումրիի մյուս եկեղեցիներում, ծանոթացավ Ս. Ամենափրկիչ եկեղեցու վերականգնման աշխատանքներին, այցելեց Ս. Գրի-

գոր Լուսավորիչ և Ս. Նշան եկեղեցիներ: Վերջին երկու եկեղեցիները թնև կանգուն, սակայն վերանորոգման կարիք ունեն: Նորին Սրբությունը ուրախությամբ Կրեկեկացի, որ Գյումրիի քաղաքապետի անձնական միջոցներով վերանորոգվում է Ս. Նշանը:

Նույն օրը Վեհափառ Հայրապետն այցելեց նաև Գյումրիի Խրիմյան Հայրիկի անվան դպրոց, ներկա եղավ քաղաքի կենտրոնական փողոցներից մեկը Խրիմյան Հայրիկի անունով վերանվանելու հուշաքարի բացմանը, Գյումրիի ժամանակակից արվեստի թանգարանում ծանոթացավ շիրակցի նկարիչների աշխատանքներին, արվեստների ակադեմիայում ունկնդրեց կամերային և ժողովագարանների նվագախմբերի ելույթները: Գեղեցիկ հայտագրով Նորին Սրբությանը ներկայացան Գյումրիի արտադրողական խմբակների սաները: Տեսնելով դպրոցի անհարմարավետ փակային պայմանները, Նորին Սրբությունը հայտնեց, որ կփորձի աջակցել երեխաներին փողոցի փակներից Կրեկեկացի:

Երեկոյան Գյումրիի հրապարակում կրկին մեծ բազմություն էր, որ եկել էր սրահալու Վեհափառ Հայրապետի օրհնությունը:

«Մենք հպարտ ենք, որ ձեր Հայրապետն ենք, որովհետև այս օրերին Մենք Կրեկեկացի ենք, որ, հակառակ բազում դժվարությունների, հակառակ ամեն նեղությունների ու փառապանքների, ոչինչ չի կարողացել վհարեցնել Շիրակ աշխարհի հավատարմոր մեր ժողովրդին: Մենք հավատում ենք, որ վերստին Գյումրի մեջ պիտի հնչի գյումրեցու զուռնան, պիտի թնդա նրա տրեմբլը, երգ ու պարը և հումորը», - Գյումրիի հրապարակում հավաքված բազմությանը դիմեց Վեհափառ Հայրապետը:

Օրն ավարտվեց ուրախ փոռհանդեսով՝ մասնակցությամբ քաղաքի երաժիշտների ու պարախմբերի:

Ս. ՊԱՏԱՐԱԳ ՎԱՐԴԱՎԱՌԻ ՏՈՆԻՆ

Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսի հովվապետական յոթօրյա այցը Շիրակի թեմ ավարտվեց հուլիսի 30-ին, Հիսուս Քրիստոսի Պաշտապանությունը փոխին: Տոնի օրը Գյումրիի Յոթվերջ Ս. Աստվածածին եկեղեցում մատուցվեց Հայրապետական Ս. Պարարագ:

Վարդավառի փոխին, կրկին անգամ դիմելով Շիրակ աշխարհի աղեկոյալ ժողովրդին, Նորին Սրբությունը հորդորեց նրանց ապավինել աղոթքի գործությանը և ճշմարիտ հավատքով նայել վաղվա օրվան:

Պարարագի ընթացքում Վեհափառ Հայրապետն իր գնահատանքը հայտնեց Շիրակի մարզպետ Ֆելիքս Փիրումյանին, Գյումրիի քաղաքապետ Վարդան Ղուկասյանին, մարզային և քաղաքային իշխանություններին, Շիրակի թեմի առաջնորդական Կրեկեկացի Ս. Միքայել ծ. վրդ. Աջապահյանին:

Հայրապետական այցելության առիթով Վեհափառ Հայրապետի բարձր փնօրի-
նությամբ պարզևների արժանացան Շիրակի թեմի հոգևոր սպասավորները: Տ. Ար-
սեն քին. Միմոնյանին Վեհափառ Հայրապետի կողմից նվիրվեց լանջախաչ, Տ. Շի-
րակ քին. Առաքելյանին և Տ. Թաթուլ քին. Հակոբյանին շնորհվեց ծաղկյա փիլոն
կրելու պատիվ: Տ. Մուրեն քին. Ծափուրյանն արժանացավ բավազ քահանայության
պապովին:

Պատարագն ամբողջապես հեռարձակվում էր Գյումրիի հեռուստատեսությամբ:
Շիրակի բոլոր լրատվամիջոցների ուշադրության կենտրոնում էին նաև Վեհափառ
Հայրապետի մյուս այցելությունները:

*«Հովհաննիսյան այս այցը կարող ենք կոչել աղոթքի փոխահանդես: Ամեն փեղ
փեսանք աղոթասաց հոգիները մեր ժողովրդի: Մեր ժողովուրդը աղոթքով կարող է
հրաշքներ գործել:*

Այսօր Ս. Գրիգոր Լուսավորչի հավաքի գործությամբ պեղք է կարողանանք
հրաշք գործել, Աստծուն մեզ գորակից դարձնել, մեր նեղությունների մեջ Նրան ա-
պավինել: Մեր նշանաբանը եղել է կյանք և հավիտենականություն: Շարունակենք
ասել նույն նշանաբանով անդադրում աղոթելով», - թերևս սա էր հովհաննիսյան
այցի ամենաբնորոշ բնութագիրը, որ փվեց Վեհափառ Հայրապետը հանդիպումնե-
րից մեկի ժամանակ: